ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

ԲԺՇԿԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ

ք. Երևան «09» Հուլիս 2021թ.

«Էրեբունի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ն, այսուհետ՝ «Կատարող», ի դեմս գործադիր տնօրեն Միքայել Մանուկյանի, որը գործում է կանոնադրության հիման վրա, մի կողմից և «Հոգեկան առողջության պահպանման ազգային կենտրոն» ՓԲԸ-ն, այսուհետ՝ «Պատվիրատու», ի դեմս տնօրեն Սերգեյ Խաչատրյանի, որը գործում է կանոնադրության հիման վրա, մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը, այսուհետ «Պայմանագիր»՝ հետևյալի մասին.

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Բուժհաստատությունը պարտավորվում է վճարի դիմաց Պատվիրատուի կողմից նշված անձին (այսուհետ՝ Պացիենտ) տրամադրել բժշկական ցուցումներին համապատասխան և դրանից բխող բժշկական օգնություն (այսուհետ՝ Բուժօգնություն):

1.2. Պատվիրատուն պարտավորվում է վճարել Բուժհաստատության տրամադրած Բուժօգնության համար:

1.3. Պայմանագրի շրջանակներում Բուժօգնություն ստացման համար Պացիենտը Կատարողի մոտ ներկայանում է անձը հաստատող փաստաթղթով և Պատվիրատուի կողմից տրված ուղեգրով, որի ձևը սահմանվում է Պայմանագրի անբաժանելի մասը հանդիսացող Հավելված 1-ով:

2. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1. Կատարողը բժշկական ծառայությունը մատուցում է իր աշխատանքային ռեժիմին համապատասխան:

2.2. Կատարողը ապահովում է մատուցված բժշկական ծառայության վերաբերյալ համապատասխան փաստաթղթի ժամանակին փոխանցումը Պացիենտին:

2.3. Պատվիրատուն պարտավորվում է Կատարողին վճարել Պացիենտին մատուցված բժշկական ծառայությունների դիմաց:

2.4. Պատվիրատուն պարտավորվում է չխոչընդոտել Կատարողի կողմից Պայմանագրով սահմանված իր պարտականությունների իրականացման ընթացքին:

3. ԲԺՇԿԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՐԺԵՔԸ

3.1. Տրամադրված Բուժօգնության գինը հաշվարկվում է այն Պացիենտին տրամադրելու պահին Բուժհաստատության գործող գնացուցակով (այսուհետ՝ Գնացուցակ):

3.2. Պատվիրատուն հավաստում է, որ Պայմանագրի կնքման պահին ծանոթացել է Գնացուցակին:

3.3. Կատարողը մինչև յուրաքանչյուր ամսվա 15-ը Պատվիրատուին է ներկայացնում նախորդ ամսվա ընթացքում մատուցված բժշկական ծառայությունների համար հաշվարկային փաստաթուղթ, որի ստացումից հետո 5 բանկային օրվա ընթացքում Պատվիրատուն կատարում է համապատասխան վճարում՝ Կատարողի բանկային հաշվին փոխանցում կատարելու միջոցով:

4. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

4.1. Կողմերից որևէ մեկի կողմից իր պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում, մեղավոր կողմը պատասխանատվություն է կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

4.2. Կողմերը ազատվում են պատասխանատվությունից Պայմանագրային պարտավորությունները չկատարելու համար, եթե դա տեղի է ունեցել ֆորս-մաժորային հանգամանքների պատճառով (հրդեհ, ջրհեղեղ և այլ

տարրերային աղետներ, ինչպես նաև պատերազմներ, գործադուլներ, իշխանությունների կարգադրություններ և այլն): Սակայն նման հանգամանքների տեղի ունենալը կողմերին չի ազատում այդ մասին միմյանց անհապաղ գրավոր տեղեկացնելու (համապատասխան փաստաթղթերով հաստատելով դա) և այդ հանգամանքները վերանալուց հետո սեփական պարտավորությունները կատարելու պարտականությունից:

4.3. Պայմանագրի 3.3-րդ կետում նշված պարտավորությունների կատարման ժամկետը խախտելու համար Պատվիրատուն պարտավոր է վճարել տույժ Պայմանագրի արժեքի 0.1 տոկոսի չափով՝ կետանցի յուրաքանչյուր օրվա համար:

5. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ

5.1. Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի կողմից այն ստորագրելու պահից և գործում է մինչև սույն տարվա դեկտեմբերի 25-ը:

5.2. Պայմանագիրը կարող է Կատարողի կողմից միակողմանիորեն լուծվել ցանկացած ժամանակ՝ առնվազը 3 օր առաջ Պատվիրատուին գրավոր ծանուցում ուղարկելու պայմանով:

6. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

6.1. Պայմանագիրը կարող է լրացվել կամ փոփոխվել Կողմերի փոխադարձ համաձայնությամբ:

6.2. Բոլոր փոփոխությունները և լրացումները ձևակերպվում են գրավոր և ստորագրվում ու կնքվում են Կողմերի կողմից:

6.3. Կողմերը պարտավոր են պահպանել միմյանց գույքային դրության, ինչպես նաև Պատվիրատուի Պացիենտի առողջական վիճակի վերաբերյալ տեղեկությունների գաղտնիությունը:

6.4. Կողմերից ոչ մեկը իրավունք չունի երրորդ անձանց փոխանցել Պայմանագրով ստանձնած իր իրավունքներն ու պարտականությունները, առանց մյուս կողմի հետ գրավոր համաձայնեցման:

6.5. Կողմերը պարտավոր են անհապաղ ծանուցել միմյանց՝ հասցեների և բանկային վավերապայմանների փոփոխման վերաբերյալ:

6.6. Պայմանագիրը կազմված է հայերեն լեզվով, 2 օրինակից, որոնք օժտված են հավասար իրավաբանական ուժով: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

7. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ ԵՎ ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ

«ՊԱՏՎԻՐԱՏՈՒ»	«ԿԱՏԱՐՈՂ»
«Հոգեկան առողջության պահպանման ազգային կենտրոն» ՓԲԸ	«Էրեբունի բժշկական կենտրոն» ՓԲԸ
Հասցե՝ ք. Երևան Նուբարաշեն 1/3	Հասցե. ք. Երևան, 0087, Տիտոգրաղյան փ. 14
Բանկ՝ «Հայէկոնոմբանկ»Էրեբունու մ/ճ	Բանկ՝ «Հայէկոնոմբանկ»Էրեբունու մ/ճ
Հ/Հ 163068068481	Հ/Հ 163318100050
ՀՎՀՀ՝ 00475611	ՀՎՀՀ 00403857
Տնօրեն՝ Ս. ԽԱՉԱՏՐՅԱՆ	Գործադիր տնօրեն՝ Ա. Ղազարյան
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 1
«Հոգեկան առողջության պահպանման ազգային կենտրոն» ՓԲԸ-ն և
«Էրեբունի բժշկական կենտրոն» ՓԲ ընկերության միջև
«09» հուլիս 2021թ -ին կնքված բժշկական ծառայությունների մատուցման պայմանագրի

Ձև

ՈՒՂԵԳԻՐ թիվ _____

(ուժի մեջ է տալու պահից՝ քսան օր ժամկետով)

Քաղաքացի _____
(անուն, հայրանուն, ազգանուն) (ծննդյան տարեթիվը, ամիսը, ամսաթիվը)

_____
(անձնագրի սերիան, համարը կամ նույնականացման քարտի համարը կամ ծննդյան վկայականի համարը)

Քաղաքացու բնակության վայրը և հեռախոսահամար _____
(մարզը, համայնքը, փողոցը, տունը, բնակարանը, հեռախոսահամարը)

_____

Ուղեգրման նպատակը՝ _____

Ուղեգրող՝ _____

Տնօրեն՝ /_____/ _____
(անուն, ազգանուն) (ստորագրությունը)

Տրամադրման օրը՝ ____.____.20___թ. Կ.Տ

«ՊԱՏՎԻՐԱՏՈՒ»
«Հոգեկան առողջության պահպանման ազգային կենտրոն»
ՓԲԸ
Տնօրեն Ս. Խաչատրյան
_____
Կ.Տ

«ԿԱՏԱՐՈՂ»
«Էրեբունի բժշկական կենտրոն» ՓԲԸ
Գործադիր տնօրեն Ծ. Մանուկյան
_____
Կ.Տ